ԶԵԿՈՒՅՑ

«Մանկական վնասվածքների կանխարգելման 2018-2023 թվականների միջոցառումների ծրագրի» շրջանակներում Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 7-ի «Մանկական վնասվածքների համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N3.1.1- 033-2017 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին» թիվ 50-Ն հրամանի պահանջների՝ 2018 թվականից ՀՀ-ում գործադրվել է մանկական վնասվածքների համաճարակաբանական հսկողության համակարգ, որի շրջանակներում 2019 թվականի ընթացքում իրականացվել է բժշկական կազմակերպություններից ստացված մանկական վնասվածքի 10195 դեպքի համաճարակաբանական ուսումնասիրություն:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ գերիշխող մասը կազմել են կենցաղային, սպորտային և ուսումնական վայրերում ստացված վնասվածքները՝ համապատասխանաբար 75.3%, 8.8% և 8.5% (Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Մանկական վնասվածների բաշխումն ըստ առաջացման վայրի, 2019 թ.:

Մանկական վնասվածքների հիմնական պատճառներն են եղել՝ պատահական ընկնելը, հարվածները, այրվածքները, հեծանիվից և այլ սարքերից ընկնելը (Գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Մանկական վնասվածների բաշխումն ըստ պատճառի, 2019 թ.:

Վերլուծության արդյունքների հիման վրա մշակվել են զեկույցներ և տեղադրվել Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի կայքում.

https://ncdc.am/?p=4480

https://ncdc.am/?p=4578

https://ncdc.am/?p=4630

http://www.moh.am/#1/2098

Հայաստանի Հանրապետության 712 նախադպրոցական հաստատությունում և 1319 հանրակրթական դպրոցում իրականացվել է «ֆիզկուլտուրա» առարկայի (պարապմունքի) դասավանդման համար պայմանների ուսումնասիրություն: Արդյունքում պարզվել է, որ մարզադահլիճներն ունեն վերանորոգման կարիք 799 (76%) դպրոցում և 263 (49%) մանկապարտեզում: 973 (81.4%) դպրոցում և 465 (70.8%) մանկապարտեզում բակային մարզահրապարակներն ունեն վերանորոգման կարիք



Գծապատկեր 3. Մարզադահլիճի վերանորոգման կարիք ունեցող դպրոցների թիվն՝ ըստ մարզերի:



Գծապատկեր 4. Բակային մարզահրապարակի վերանորոգման կարիք ունեցող դպրոցների թիվն՝ ըստ մարզերի:



Գծապատկեր 5. Բակային մարզահրապարակի վերանորոգման կարիք ունեցող դպրոցների թիվն՝ ըստ մարզերի:



Գծապատկեր 6. Բակային մարզա/խաղահրապարակների վերանորոգման կարիք ունեցող մանկապարտեզների թիվն՝ ըստ մարզերի:

Վերլուծության արդյունքում մշակվել է առաջարկությունների փաթեթ, որը ներկայացվել է շահագրգիռ գերատեսչություններին (տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը):

2019 թ-ին իրականացվել է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»-ի թվով 12 մասնագետների ուսուցում, որի շրջանակներում ներկայացվել են մանկական վնասվածքների պատճառները, տվյալների հավաքագրման և վերլուծության սկզբունքները, տարբեր տեսակի վնասվածքների կանխարգելման մեթոդաբանությունը՝ հետագայում փորձը տեղային մասնագետներին փոխանցելու համար: https://ncdc.am/?p=4480

2019 թվականի նոյեմբերի 26-ին Կոտայքի, մարզպետարանի հետ համատեղ կազմակերպվել է հանդիպում-քննարկում մարզի հանրակրթական դպրոցների շուրջ 65 տնօրենների հետ, որտեղ քննարկվել են մանկական վնասվածքների կանխարգելման մեթոդաբանությունը՝ հաստատված ԱՆ 2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 3318-Ա հրամանով:

https://ncdc.am/?p=5228

ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 3280-Ա հրամանով հաստատված «Ուսուցիչներին՝ առողջ ապրելակերպի խթանման հարցերով ուսուցման ծրագրի» շրջանակներում՝ ՀՀ Կրթության և գիտության Ազգային Ինստիտուտի հետ համատեղ իրականացվել է ՀՀ Արագածոտնի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի թվով 276 ուսուցիչների ուսուցանում մանկական վնասվածքների կանխարգելման վերաբերյալ:

https://ncdc.am/?p=4573 ,

https://www.facebook.com/ncdcarm/photos/a.2571462932934906/2571463062934893/?type=3&theater ,

https://www.facebook.com/ncdcarm/photos/a.885425658205317/2576227799125086/?type=3&theater

Առողջապահության նախարարության մասնագետների կողմից կազմակերպվել և իրականացվել են դասընթացներ 8 նախադպրոցական կազմակերպությունների անձնակազմի շրջանում: Ընդհանուր թվով նախադպրոցական կազմակերպության 112 աշխատակից ուսուցանվել է մանկական վնասվածքների և քիմիական թունավորումների կանխարգելման հարցերով:

Տարբեր տեսակի քիմիական թունավորումների կանխարգելման նպատակով կազմակերպվել են քննարկումներ մարզպետարաններում, նախապատրաստվել և տարածվել են իրազեկման նյութեր, պատրաստվել են զեկույցնել և տեղադրվել կայքում, ինչպես նաև հրապարակվել են հոդվածներ մամուլում և հեռարձակվել են հեռուստահաղորդումներ կենտրոնական և տեղական հեռուստաընկերություններով:

https://www.facebook.com/314745622582464/videos/400376637222789/

http://moh.am/#1/2143

http://moh.am/#1/2103

http://moh.am/#1/1454

http://moh.am/#1/1522

https://ncdc.am/?p=4395

https://ncdc.am/?p=4561

https://ncdc.am/?p=4581

https://ncdc.am/?p=4661

https://ncdc.am/?p=4686

https://ncdc.am/?p=4796

https://ncdc.am/?p=4961

ՀՀ առողջապահության նախարարությունը UNICEF միջազգային կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում քննարկվել են մանկական վնասվածքների կանխարգելման նպատակով http://itmedia.am/263/ վեբ-կայքի ստեղծման քայլերը:

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հետ համագործակցության շրջանակում իրականացրել են դասընթացներ նախադպրոցական կազմակերպությունների անձնակազմի համար, որտեղ ներկայացվել են նաև մանկական վնասվածքների կանխարգելման սկզբունքները:

https://www.facebook.com/ncdcarm/photos/a.937565146324701/2191692730911930/?type=3&theater

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ